Մինչեւ հասաւ աստինանը էն վերջին,
Եղեր էր ան պարմանի մը յաղթանդամ:
Իր նայուածքին տակ դիւթական
Կը վերականգնէր գիւղ եւ աւան աւերակ:
Արդարութեան լոյսին շաւղէն յաղթական
Երջանկութիւնն, եղբայրութիւնն ձեռք ձեռքի
Կը վազէին դէպ անդաստանը հայկական
Ծափերու տակ հրեշտակներու...
Եւ հայրենի երկիրն իմ քարուքանդ
Արշալոյսի շողերուն տակ ոսկեվառ
Կը վերածնէր, կը վերածուէր
Եդեմի մը երկրային...

ՊԵՐՃՈՒՀԻ

ԱՆՅՈՒՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՑՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Բարձրագոյն Դրան ստուերի տակ, հայ տպագրիչները, փողոցների ջրակոյտերի մէջից ցեխոտ ճառագայթներ են ժողովում:

Էօժէն Սիւն եւ Բօկամբօլը Ստամբուլի մզկիթների աղբիւրներում կրօնական լուացման են ենթարկւում եւ հայ ընթերցողի հոգու վրայով ոտաբոբիկ ման գալիս:

Բիւզանդական կիսածիր պատերի ծակերից, գրավաճառներ, ապշած ֆէսերին «Մայր Հայաստանի» նկարը եւ Կաղանովայի յիշատակներն են երկարում: Կիսախաւար խաների մէջ նստած չնացած գրչակներ դասագրքեր են լոյս ընծայում՝ կուրօրէն ընդօրինակելով փարիզեան ծթռած մանկավարժական սկզբունքները:

Այստեղ Կազիմիր Դելավինը մեծ մարդ է, Ժօրժ Օնէն՝ հսկայ, Օկտավ Ֆէոյէն՝ առաքեալ:

Կամուրջի վրայ, կայմերի անհանգիստ անտառի մօտ, հայ մխիթը մի վայրկեան կանգ է առնում եւ ցնցոտիները յանձնում հեռուից եկող հովերին:

Գալաթիոյ մօտ նրան սպասում է ամենօրեայ հացը:

Փողոցը, բօրսան, մտաւոր մամուռը, գայթակղութիւնը, գազանային ոխը՝ ադատ մրտքի, անչահախնդիր ներշնչման հանդէպ, ուռուցիկ լուրերը, չինծու նորութիւնները, շահատականութիւնը, մի խօսքով, ամբողջ բարոյական ֆրանկախառը, երկու ու կէս դահեկանով մատուցում են նրան եւ ճանապարհ դընում:

Թերթի գլխին կանգնած է Ֆ. Թերթի խմբագիրը, նրա համար ընթերցողը աղբանոց է և խօսքը՝ դրամ: Ոչ մի սկզբունք, ոչ մի գաղափար: Ժամանակը փարայ է: Բօրսան տաճար:

Վարը, մի անկիւնում, հարբած մի երգիծաբան, մի քիչ չինծու ժպիտ է ծախում անցնող խանութպաններին եւ մի բաժակ օղի աղերսում:

Մի քանի փողոց վեր. Ջենովացիների, վենետիկցիների, միսիոնարների եւ թրքերի քարացած շուքերի մօտ պատսպարուած՝ կանգնել է հայ եկեղեցին:

Կանգնել է ոչ մի ոճով:

Քարերի կուտակում: Ցիշատակների դերեզման:

Կիլիկիայի ֆրանկներից, Բիւզանդիոնի յոյներից, վենետիկեան փայլփլուն խորհրդներից մնացած, աւելի շուտ դիզուած գծաւորումներ, զուրկ հիմնական, միապաղաղ մրտքի կերպաւորումից:

Գալաթիայի եկեղեցին ամէն քրիստոնեայ կարող է մօտենալ, բայց ներս մտնելուց յետոյ նա պիտի հասկանայ իր սխալը եւ գնայ իր եկեղեցին փնտռելու համար:

Նրանց թուին եւ հայը:

Դուրս է գալիս՝ բլուրից ի վեր, քարուքանդ սանդուխներով մագլցում, թշուառութեան այլանդակ այս Գողգոթան անցնում ու իր արիւնած ոտքերը բերում Պերա:

Այստեղ միտքը վերջացած մոմի բոցի պէս, երեք անգամ հառաչանք է քաշում եւ մեռնում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան